

Ճ Ճ Ի Ն

Բուժամբի այս առաջին թիւին մէջ կ'ուզէի շատ աւելի բարձր նիւթի մը վրայ գրել, բարձրանալ բժշկութեան բարոյական վերին մթնոլորտներուն մէջ ու տալ խորհուրդներ հոգեկան առողջապահութեան վրայ:

Բայց այս շարթուան մէջ տեսած քանի մը հիւանդներս վերադարձուցին զիս երկրի վրայ ու ցոյց տուին ինծի թէ իբրեւ բժիշկ շատ ուրիշ նիւթեր ունիմ գրելիք, որոնք կրնան աւելի օգտակար ըլլալ հայ դաղութին:

Այո', ես ձեզի պիտի խօսիմ սօղութեան վրայ:

Երբեք միտքէս չէր անցներ թէ օր մը այս շատ աղտոտ որդերուն վրայ յօդուած պիտի գրէի: Բայց պարագաները զիս իրականութեան ճամբուն մէջ գրին:

Արեւելքի աղէտները, որոնք Փարիզ ու Ֆրանսա բերին հայ ընտանիքներ իրենց զաւակներով, ինծի շատ բաներ սորվեցուցին: Ձէի գիտեր թէ ֆինները որոնք կ'ապրին մութ ու գարշահոտ աղիքներու մէջ, մարդուս նկուղներուն մէջ՝ պատճառ կը դառնան մտաւոր ծանր խանգարումներու. ոչ միայն այդ ճիւղները ունեցողներուն, այլ անոնց ծնողաց քով իսկ: Կը տեսնեմ հայրեր ու մայրեր, որոնք ահաբեկած, գրեթէ խենդեցած կուգան մեզի, մեր եկեղեցիին ճրի դարմանատունը ու կը պաղատին որ իրենց պատիկին որդերը ստակեցնելու համար դեղ մը տանք: Կը հարցնենք իրենց թէ տեսա՞ծ են որդերը: Ոչ. չեն տեսած, բայց վստախ եմ: Ի՞նչ բանի վրայ հիմնուած է իրենց վստահութիւնը չեն գիտեր: Վստահ են, այդ կը բաւէ: Կը հարցնենք թէ ի՞նչ ունի իրենց տղան: Շատ անգամ ոչինչ, ուրիշ անգամ բոլորովին տարբեր հիւանդութիւններ:

Այս շարթուան երկու տեսած հիւանդներս այսպէս էին:

Առաջինին մայրը մեծ լրջութեամբ պատմեց որ իր զաւակը՝ 6 տարեկան, երկու տարեկանէն մինչեւ այսօր լուսնոտութիւն (épilepsie) ունի գրեթէ ամէն ամիս: Չորս անգամ որդը դուրս հանելու համար դեղ տուած է: Որդը չէ ինկած, բայց չորս անգամ տղուն կեանքը վտանգուած է, շատ բարձր չափով դեղ տալով:

Համոզուած թէ այդ պատիկը լուսնոտութիւն ունի առանց ճճիի, բայց համոզելու համար հայրը, որ դժբախտ արարած մը կ'երևար, տղուն կղկղանքներուն մէջ փնտռել տուի բոլոր ճճիներուն

ներկայութիւնը ու անոնց հաւկիթները: Laboratoire-ը, ինչպէս կը սպասէի, ժխտական պատասխան տուաւ: Տղան չունէր ոչ ճճի և ոչ ալ ճճիի հաւկիթ: Կը կարծէի թէ այս դրական ու վերջնական գննութենէն յետոյ, հայրը պիտի համոզուէր: Ոչ. ան չհաւատաց ու չուզեց հասկնալ թէ դժբախտաբար իր տղան ունէր սօզուլիմանէն շատ աւելի ծանր հիւանդութիւն մը, որովհետեւ եթէ կրնանք մէկ իսկ մէկ քանի տարուան մէջ, աղէկցնել լուսնոտութիւնը, եթէ չգլխտնանք անոր էական ու նախնական պատճառները: Հայրը մեկնեցաւ տղուն ձեռքէն բռնած ու կրկնելով թէ իր տղան աղէկցնելու համար սօզուլիմանի դեղ կը փնտռէ: Մեկնեցաւ ան՝ տխուր ու վհատած: Ահաւաստիկ օրինակ մը թէ որդ չունեցող տղու մը ծնողացը վրայ սօզուլիմանը որքան կ'ազդէ:

Երկրորդ պարագան տարբեր էր: Պատիկ տղան, եօթը տարեկան, չորս տարեկան հասակին օր մը սովորական որդ մը ձգած էր իր կղկղանքներուն հետ: Անկից ի վեր տասն անգամ հայրը իրեն դեղ տուած էր, միւս սօզուլիմաններն ալ դուրս հանելու համար: Երկրէ երկիր կը պտտցնէր այդ խեղճ մարդը իր տղան ու իր դժբախտ ու տխուր հոգին:

Կ'երթար մէկ բժիշկէն միւսը: Ոչ ոք կրնար աղէկցնել իր տղան: Պարզ քննութեամբ մը տեսայ թէ պարզապէս կոկորդի մսաբոյս ունէր ու այդ էր պատճառը որ գիշերը տղան կը խռկար ու բերանը բաց կը քնանար և շարունակ հարբուի կ'ըլլար: Վիրաբոյժին ղրկել ուզեցի: Ոչ. «Տղաս սօզուլիման ունի, Տօքթօր, դուն անոր եղ տուր» կ'ըսէր հայրը շուարած: Ան ալ գնաց նոր բժիշկ մը փնտռելու:

Արեւելքի մէջ ինչպէս այս սոսկալի անունը հանած են որդերը: Արդարացի՞ է այս սարսափը:

Կ'ուզեմ ուրեմն օգտուիլ այս օրինակներէն ու բացատրել՝ յաջորդ յօդուածով մը թէ ինչ են ճճիները, որոնք են իրենց ըրած աւերումները, ի՞նչ են անոնց դարմանները ու վերջացնել ըսելով թէ ինչո՞ւ համար այս անչուկ ու անձայն որդերը ջիղերուն վրայ կ'ազդեն:

ԲԺ. Պ. ՔՕԼՕԼԵԱՆ

Մի հաւատաք ամառաւորութիւններուն, ըսելով թէ բազմաթիւ սերունդներու կողմէ փոխանցուած են: Մի հաւատաք բանի մը ըսելով թէ շատերու կողմէ կրկնուած է: Սակայն երբ սկզբունք մը համաձայն է բանականութեան և օգուտ կը բերէ ամէնուն, ընդունեցէ՛ք գայն և պիմք փառեցէ՛ք ամառ: